Հայտարարություն ՀՀ Հատուկ քննչական ծառայության՝ լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու հետ կապված գործերով կայացված որոշումների կապակցությամբ

Սեպտեմբերի 29, 2014

Սեպտեմբերի 25-ին հայտնի դարձավ, որ ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը հանցակազմի բացակայության հիմնավորմամբ որոշել է մերժել քրեական գործի հարուցումը Ազգային Ժողովի մուտքի մոտ սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած միջադեպի առիթով, երբ խորհրդարանի անվտանգության ծառայության ղեկավարը խոչընդոտել էր «Ա1+» հեռուստաընկերության թղթակից Մարինե Խաչատրյանի մասնագիտական գործունեությունը: Իսկ ավելի վաղ, հունիսի 24-ին, ՀՔԾ-ն կարճեց քրեական գործը՝ կապված ոստիկանների կողմից «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Անի Գեւորգյանի նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելու հետ: Փաստերի այս տրամաբանությունը թույլ է տալիս ենթադրել, որ ամենայն հավանականությամբ անհետեւանք կմնան նաեւ սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած՝ Ղազախստանի հայ համայնքի «Նաիրի» ընկերակցության ղեկավար Արտյուշա Կարապետյանի եւ նրան ուղեկցողների բռնարարքները «Հայկական ժամանակ» օրաթերթի թղթակից Թագուհի Հովհաննիսյանի նկատմամբ:

Ըստ էության, մեզանում ձեւավորվում է արատավոր ավանդույթ. լրագրողների գործունեության խոչընդոտման կամ նրանց նկատմամբ բռնության մասին հաղորդում ստանալուց հետո ՀՀ դատախազությունը հանձնարարում է ՀՔԾ-ին՝ զբաղվել միջադեպով, իսկ վերջինս կոծկում է գործը՝ ստանդարտ «հանցակազմի բացակայության» հիմնավորմամբ: Եվ դա այն դեպքում, երբ բռնության ու խոչընդոտման փաստերը նկարահանված եւ տեղադրված են համացանցում, բազմաթիվ ԶԼՄ-ներում:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հայտարարում ենք, որ ՀՔԾ-ի նման գործելակերպը խիստ դատապարտելի է եւ վտանգավոր. այդ կառույցը փաստորեն իր պաշտպանության տակ է առնում բռնություններ իրականացնողներին, խորացնելով հիասթափությունն ու անվստահությունը իրավապահ մարմինների նկատմամբ:

Մենք պահանջում ենք.

– Հատուկ քննչական ծառայության ղեկավարությունից՝ միջոցներ ձեռնարկել վերոհիշյալ փաստերի վերաբերյալ կայացրած որոշումների վերանայման համար եւ պատասխանատվության ենթարկել անաչառություն ու արհեստավարժություն չցուցաբերած քննիչներին,

– ՀՀ գլխավոր դատախազությունից՝ պատշաճ վերահսկողություն իրականացնել ՀՔԾ-ի գործողությունների եւ կայացրած որոշումների նկատմամբ եւ ապահովել լրագրողների դեմ ուղղված բռնարարքների ու մասնագիտական գործունեության խոչընդոտումների

յուրաքանչյուր փաստի մանրակրկիտ հետաքննում՝ մեղավորներին հայտնաբերելու ու պատասխանատվության ենթարկելու համար,

– ՀՀ ղեկավարությունից՝ խստագույնս պահանջել իրավապահ մարմիններից՝ կասեցնել թափ հավաքող անպատժելիության շքերթը մեր երկրում:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (նախկին «ԻՆՏԵՐՆՅՈՒՍ»)
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ
ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ